*բագ. :Ա: Հասանա առնեն եւ :Ա: Մամքանա անխափան»*[166]*: Վերջում աւելացնենք նաեւ, որ հետագայում (ԺԴ. դ. վերջ – ԺԵ. դ. սկիզբ)* Դօփ *էր կոչւում նաեւ Լանկ-Թամուրի արշաւանքին զոհ գնացած «վերջին» Հասան «Մեծ»-ը*[167]*: Եւ այսպիսով ամփոփելով՝ տեսնում ենք, որ ոչինչ չի խանգարում՝ Դօփ Երկայնաբազուկ իշխանուհու ամուսին Հասանին համարելու Հասան Կրօնաւորեալի «հողանիւթի»՝ Ծարի շրջանը ժառանգած Գրիգորի (Ղարա-Գրիգոր) աւագ որդին:*

*Տեղին յաւելենք, որ Գրիգոր Զինուորի որդի Սարգիս վանահօր անունից շարադրուած՝ Թարգմանչաց վանքի յայտնի Աւետարանի յիշատակարանում մասնաւորապէս ասւում է. «Ամուսնացեալ* [իմա՛ *իր հայրը*] *ընդ դստեր Տարսաիճ իշխանին, ընդ ամենաւրհնեալ պարկեշտ տիկնոջն Ասփայի, ծնանի ի սմանէ* ուստերս *եւ դստերս...»*[168]*: Դրանից բխում է, որ հնարաւոր չէ համաձայնել Բ. Ուլուբաբեանի հետ, ըստ որի Գրիգոր Գ. Ծարեցին ունեցել է միայն հոգեւորական դարձած՝ Սարգիս անունով որդի, ուստի ԺԴ. դարի Ծարի աշխարհիկ իշխանները չէին կարող սերել Հասան Արիականից*[169]*: Ուսումնասիրողի կողմից նշուած* Վահրամն *իրականում կարող է համարուել Սարգիս վանահօր եղբայրը (կամ եղբօրորդին), ընդ որում, ո՛չ անդրանիկը (կամ անդրանիկի), որը, ենթադրաբար՝ վաղամեռիկ, անշուշտ, պէտք է ստացած լինէր պապի անունը՝* *Հասան:

* * *

*Էապէս ուղղելի են թւում նաեւ Սակռ իշխանի եւ, այսպէս կոչուած,* Սակռեան *իշխանատոհմի մասին գրականութեան մէջ արմատաւորուած եւ Բ. Ուլուբաբեանի գրքում ամփոփուած մտայնութիւնները*[170]*: Դրանց վերաբերեալ արդէն արդարացի եւ բաւականին հանգամանալից վերապահում է արուած Գեղամ Կիրակոսեանի կողմից*[171]*: Մասնաւորապէս, ցոյց է տրուած, որ Հին Վաղուհաս գիւղատեղի խաչքարի եւ Բերդաձորի Ս. Գրիգոր վանքի միանաւ եկեղեցու հիւսիսային պատի վիմագրերում (առաջինը յայտնի է միայն Խաչիկ Դաղեանի վերծանութեամբ*[172]*) 1216 եւ 1224 թթ. Սակռ անունով իշխանն իրեն կոչում է «որդի Վախտանգա», այսինքն՝ պարզապէս* Տանգիկի*, եւ «եղբայր Հասանա», այսինքն՝ պարզապէս* Զալալ Դօլալի *(առաջինում ունենք. «Թիւն :ՈԿԵ:* [=1216 թ.]*: Ես՝ Սակռ,* որդի Վախտանգա*, կանգնեցի զխաչս բարեխաւս առ Աստուած հոգւոյ իմոյ եւ եւ զԹղեկրա այգին իւր հողով եւ կատապանաւ եւ Եզնանստին երկիրն ի Սուրբ Գրիգոր Բերդաձորա եւ զԲախերին Մատաղիսն եւ զՃաքեցանց երկիրն եւ :Ա: ջաղաց, <u>ի ժամատուն քէ</u>* [փխ վերջին երեք անիմաստ բառերի, թերեւս, արբագրելի է՝ *:Ի: ժամ ետուն վ՞ս՞*] *հոգւոյ փրկութիւն ամուսնոյ ի-*

166 Տե՛ս **Յովհ. եպս. Ծահխաթունեանց**, *Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի*, հտ. Բ, էջ 185, հմմտ. **Հ. Լ. Պետրոսեան, Լ. Վ. Կիրակոսեան, Վ. Ա. Սաֆարեան**, *Հանդաբերդի վանքը*, էջ 17: *«Թոռն Դաւիթին»* արտայայտութեան ուշ գրական արձագանքը տե՛ս Սոթքում Ազատ գիւղի եկեղեցու ԺԷ. դ. վիմագրում. «Որդւոյ Սարգսի, *թոռնեայն Դոփայ*, քոյր Մեծին Իւանէի եւ սպասալար Զաքարէի» (տե՛ս վերեւում, ծնթ. 155): Տեղին նշենք նաեւ Հանդաբերդի ուշագրաւ նորայայտ վիմագրի մասին. «[Զէ]ասա՞ն եւ [Մ]ամքան յիշեցէ՛ք ի Քրիստոս: Գրիգոր»: Տե՛ս **Ս. Կարապետեան**, *Հայ մշակոյթի յուշարձանները*, էջ 28. **Հ. Լ. Պետրոսեան, Լ. Վ. Կիրակոսեան, Վ. Ա. Սաֆարեան**, *Հանդաբերդի վանքը*, էջ 77:

167 Տե՛ս 1411 թ. Աւետարանի յիշատակարանում, հմմտ. **Բ. Ա. Ուլուբաբեան**, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 330; **Հ. Լ. Պետրոսեան, Լ. Վ. Կիրակոսեան, Վ. Ա. Սաֆարեան**, *Հանդաբերդի վանքը*, էջ 20:

168 *ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, էջ 84:

169 **Բ. Ա. Ուլուբաբեան**, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 330-337:

170 Նոյն տեղում, էջ 157-159:

171 **Գ. Ե. Կիրակոսեան**, նշ. աշխ., էջ 175-176:

172 Տե՛ս **Խ. Վ**[**արդապետ**], *Երկու վանք*, - «Արարատ», 1896, էջ 81: